Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1820

34

№ 6 ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ №

Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆԻ.

ԱՆԳԼԻԱՅԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ

ԿԵԱՆՔԸ

9(42)
Հ-56

ԹԻՖԼԻՍ 1904

Տպարան „ՀԱՅԱՍՏԱՆ“

Обращайтесь с книгой любовно и аккурат

она служит не вам одному, а многим:

1) Не **пачкайте книгу надписями и рисунками, не под черкивайте слов.** То, что полюбите в книге за писывайте в свою тетрадку.
2) Не **портите переплета.** При чтении завертывай его в бумагу.
3) Не **загибайте углов у страниц** имейте лучше б мажную закладку.
4) Не **перелистывайте страниц грязными и мокры руками.**
5) Если у вас имеется в доме заразный больной,

2139

№ 624.

767.

30 MAY 2011
34
767
9(42)
Ա-56
Ա-11
308.4
Ա-11
694
168

ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆԻ

№ 4.

ԱՆԳԼԻԱՅԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

Կազմված է՝ ըստ Սենեքայոսի, Լեկլերկի և Բալպոլորդի աշխատութիւնների

ԹԱՐԳՄ. Մ.

ԹԻՖԼԻՍ
Տպարան „ՀԱՐՄԱՆ“ Միխայել. փող. № 81.
(14)

11 FEB 2013

18

Дозволено цензурою. Тифлисъ, 6-го Апрѣля 1904 года.

497
41

ԱՌԱՋԱԲԱՆ

Ինքնակրթութեան համար անհրաժեշտ է ծանօթանալ քաղաքակիրթ երկիրների և ազգերի հասարակական, սոցիալական և տնտեսական կազմակերպութեան հետ։ Այդ կողմից առանձին հետաքրքրութիւն է ներկայացնում Անգլիան, ուստի և մենք յարմար նկատեցինք մեր Հանրամատչելի Գրադարանի համար ներկայ աշխատութիւնը, որ մտել է ռուսաց «Գիտութիւն և Կեանք» հրատարակչական ընկերութեան «Կրթական գրադարանի» շարքը։ (Образовательная Библіотека Книго-Издательства «Наука и Жизнь», №№ 2 и 3—Политическая и Общественная жизнь Англіи, С. П. Бургъ, *1903*).

Կազմողը, ինչպէս յայտնում է ներածութեան մէջ, անգլիական քաղաքական պատմութիւնը կազմելիս համարեա բացաւորապէս օգտուել է Սենեօբոսի «Ժամանակակից Եւրոպայի քաղաքական պատմութիւնը» աշխատութիւնից։ այս աշխատութիւնը թարգմանուած է ֆրանսերէնից, պրոֆէսոր Ա. Տրաչևսկու խմբագրութեամբ, հրատարակութիւն Ֆ. Պաւլէնկովի, Պետ. *1898* թ.

Հ. Ա.

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Եւրոպան 1814 թուականին

Եւրոպայի նորագոյն պատմութիւնը սկսւում է Նապոլէոնի պարտութիւնից։ Ինչպէս յայտնի է, Նապոլէոնը ըստ իր կամքի ձևակերպում էր Եւրոպայի քարտէզը։ Նրա իշխանութիւնից դուրս մնում էին Եւրոպայի միայն հեռաւոր մասերը՝ Անգլիան, Ռուսաստանը, Պորտուգալիան... 1812 թ. դէպի Ռուսաստան կատարած անյաջող արշաւանքը վերջ դրեց Նապոլէոնի զօրութեանը։ Նրա ընդդէմ կազմուեց 4 գլխաւոր պետութիւնների (Անգլիա, Ռուսաստան, Աւստրիա, Պրուսիա) դաշնակցութիւն։ Լայպցիգի ճակատամարտը Նապոլէոնին Գերմանիա նետեց։ Պարիզի առումը նրան ստիպեց գահից հրաժարուել։ Այն ժամանակ հարկաւոր եղաւ մտածել այն երկիրների մասին, որոնք միացել էին Ֆրանսիային սկսած 1790 թ.։ Այդ երկիրները մնում էին առանց կերպագոյն իշխանութեան։ Դրա համար դաշնակիցները Վիէննայում վեհաժողով գումարեցին. վեհաժողովին ներկայ էին «երկու կողմին էլ մասնակցող պետութիւնների» լիազօրները. բայց համարեա բոլոր տէրութիւնները մասնակցել էին պատերազմին, այնպէս որ Վիէննա ժողովեցան 143 լիազօր։ Սկսուեցան մի շարք պարահանդէսներ։ Ընդհանուր ժողովը նախ նշանակուեց 30 մայիսից 2 ամիս յետ, այնուհետև յետաձգուեց 1 հոկտեմբերի, վերջապէս՝ նոյեմբերի 1-ին։ Վեհաժողովը իսկապէս չկայացաւ, այլ գումարուում էին առանձին մասնաժողովներ, որոնք կազում էին մասնաւոր բնաւորութիւն ունեցող դաշինքներ։ Այդ դաշնագրերի հաւաքածուն յայտնի է Վիէննայի վեհաժողովի [1]) վերջնական ակտ անունով։ Անգլիան պահպանեց իր նուաճած երկիրները՝ Մալտա, Յոնիական կղզիները, Հելգոլանդ և Եւրոպայից դուրս՝ Կապշտադ (Հարաւային Աֆրիկա). Աւստրիան յետ ստացաւ Տիրոլն և դրանից զատ Լոմբարդիան ու Վենետիկը։ Բելգիան և Հոլլանդիան կազմեցին Նիդերլանդեան թագաւորութիւնը, որ տրուեց Օրանժի դքսին։ Սարդինիայի թագաւորը ստացաւ Պիէժոնտը և Գենուան։ Նախկին գերմանական կայսրութեան փոխանակ կազմուեց գերմանական դաշնակցութիւն՝ 34 անկախ պետութիւններից և 4 ազատ քաղաքից (Համբուրգ, Բրեմէն, Լիւբէկ, Ֆրանկֆուրտ—Մայն գետի վրայ)։ Պրուսիան ստացաւ Պոզնանը, Հռենոսի ձախ ափը, Վեստֆալիան, Սաքսոնիայի մի մասը և Պոմերանին։ Ռուսաստանին անցաւ Վարշաւայի դքսութեան մեծագոյն մասը «Լեհաստանի թագաւորութիւն» անունով։ Այդ միջոցին հասաւ Նապոլէոնի վերադարձի լուրը։ Դաշնակիցները օգնութիւն խոստացան Ֆրանսիայի թագաւորին և այն ամէն տէրութեան, որի վրայ կյարձակուէր Նապոլէոնը։ Վատերլոում (Բելգիա) տեղի ունեցաւ Նապոլէոնի վերջին ճակատամարտը (15 յունիսի 1815 թ.)։

[1]) 9 յունիսի 1895 թ.

Նրա ընդդէմ եկան անգլիացիք՝ Ուելինգտոնի առաջնորդութեամբ և պրուսացիք՝ Բլուխերի առաջնորդութեամբ։ Նապոլէոնը պարտութիւն կրեց։ Շուտով նա երկրորդ անգամ հրաժարուեց գահից և անձնատուր եղաւ անգլիացիներին։ Դաշնակցական զօրքերը նորէն մտան Պարիզ։ Պարիզի նոր խաղաղութեան հաստատումն Ֆրանսիան զրկուեց Սաւոյից, որն անցաւ Սարդինիայի թագաւորի ձեռքը։ Վիէննայի վեհաժողովի սկզբունքները XVIII դարի դիպլոմատների սկզբունքներն էին՝—Եւրոպայի հաւասարակշռութիւնը և վարձատրութիւնների սիստէմը։ Ռուսաստանը, Անգլիայի նման, պահեց իր գրաւած երկիրները-Լեհաստանի վերոյիշեալ մասը, Ֆինլանդիան և Բեսսարաբիան։ Հինգ մեծ պետութիւնների (Անգլիա, Ֆրանսիա, Ռուսաստան, Աւստրիա, Պրուսիա) հաւասարակշռութիւնը պահպանւում էր, ինչպէս XVIII դարում, նոյնպէս և XIX դարի առաջին կիսում։ Հոլլանդիան, Զուիցերիան չէզոք յայտարարուեցան։ Այն տէրութիւնները, որոնց ներքին կազմակերպութիւնը խանգարուել էր Ֆրանսիական արշաւանքների պատճառով, դարձեալ վերականգնուեցան իրանց նախկին կառավարչական կազմով։ Կառավարութեան կանոնաւոր ձև ճանաչուեց բացարձակ միապետութիւնը, բացառութեամբ սահմանադրական Ֆրանսիայի, Հոլլանդիայի և Զուիցերիայի։ Սակայն Ֆրանսիական յեղափոխութեան փորձը անհետևանք չանցաւ։ Կազմուեցին ազատամտական (լիբերալ) կուսակցութիւններ, որոնք թշնամի դարձան 1814 ը. քաղաքական ռէժիմին։ Զանազան պետութիւնների մէջ բաժանուած ազգութիւնները ազգայնական (նացիոնալ) կուսակցութիւններ տուին. Դժգոհ ազատամտականները և ազգայնա-

կանները դիմադիր կուսակցութիւն (օպպոզիցիա) կազմեցին, որը առանձնապէս ուժեղ էր Աւստրիայում։ Աւստրիական պետութեան ղեկավար Մետտերնիխը յեղափոխական էր կոչում դիմադիր կուսակցութեան բոլոր անդամներին, որովհետև նրանք իրենց նեցուկն ունէին Ֆրանսիական յեղափոխութեան սկզբունքները, այն է ժողովրդական ինքնավարութիւն, ազատութիւն և հաւասարութիւն։ «Միապետները պէտք է պահպանեն գոյութիւն ունեցող օրինաւոր կարգը, իսկ խռովարարների նպատակն է այդ կարգի տապալումը»։ Պահպանողական պետութիւնների և դիմադիր կուսակցութիւնների մէջ (որոնց մէջ մտնում են ազատամտականները, ազգայնականները և ռամկավարականները) կռիւ ծագեց. այդ կռիւն է, որ մի ամբողջ դար շարունակւում է։

ԱՆԳԼԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ XIX. ԴԱՐՈՒՄ

I

Անգլիան նախքան 1832 թ. բարեփոխությունը

Արդի Եւրոպայի քաղաքական կազմութիւնը—սահմանադրական պետութիւններ, պարլամենտներ, անձնական ազատութեան երաշխաւորութիւն—առնուած է Անգլիայից, որ այդ կողմից Եւրոպայի առաջնակարգ երկիրն է համարւում. այդ պատճառով մենք մեր թռուցիկ ակնարկները սկսում ենք նրա քաղաքական կեանքի պատմութիւնով։ 1814 թ. Անգլիան դադարեցրեց ներքին երկարատև կռիւը, որ աւելի կռել կոփել էր հին վիճակը։ Վերջինս բաղկացած էր 3 իրար հետ սերտ կապուած հաստատութիւններից՝ կեդրոնական կառավարութիւնից, տեղական իշխանութիւններից և եկեղեցուց։

Կեդրոնական կառավարութիւնը կազմում էին թագաւորը իր խորհրդով, լորդերի խորհրդարանը (դրա անդամները ժառանգական են և նշանակւում են թագաւորից) և համայնքների պալատը (կազմուած պատգամաւորներից)։ Այդ 2 խորհրդարանները կազմում էին պարլամենտ, որի առաջ պատասխանատու էին թագաւորի խորհրդատուները—մինիստրները։ Այդպէս ուրեմն երկիրը կառավարում էր

պարլամենտական մեծամասնութիւնը, ֆրանսիական օրէնքի համաձայն. «թագաւորը թագաւորում է, բայց չէ կառավարում»։ Սակայն Գէորգ Գ (1760—1820) կամենում էր իշխել անձամբ, առանց պարլամենտի, ասելով որ «ցանկանում է իւր գլխաւոր մինիստրը ինքը լինի»։ Պարլամենտականութեան դէմ կռիւ մղելիս Գէորգ Գ յենուած էր հին թագաւորական կուսակցութեան վրա, որից առաջ եկաւ Տորի կուսակցութիւնը։ Վերջինս գերակշռող էր հանդիսանում շնորհիւ այն հանգամանքին, որ ընտրւում էր համայն ազնուականութեան «ջենտրի» 1) և հոգևորականութեան կողմից։ Հակառակ Տորիներին կազմուեց Վիգ կուսակցութիւնը որ պաշտպանում էր պարլամենտական վարչութեան կերպը։ Բայց յեղափոխական Ֆրանսիայի դէմ պատերազմելիս կուսակցութիւնների ներքին կռիւը պէտք է դադար առնէր, որպէսզի ապագայում, Վիլենայի վեհաժողովից յետոյ, նոր ուժով սկսուէր։

Տեղական իշխանութիւնները կամ ընտրում էր ազգաբնակութիւնը իրեն միջից կամ նշանակում էր կառավարութիւնը տեղացի հարուստներից. վերջիններս առանց որև է վարձատրութեան վարում էին այլև այլ պաշտօններ (օրինակ, հաշտարար դատաւորների, շերիֆների, և այլն)։ Ներկայացուցիչները ուղարկւում էին գաւառների ժողովների (186), քաղաքային և գիւղական ինքնավարութիւնների (467) համալսարանների (5) կողմից 7 տարի ժամանակով։ Ընտրութիւնները անկարգ կերպով էին կատարվում.

---

1) Ջենտրի (gentry)—այսպէս է կոչում տորին ազնուականութիւնը Անգլիայում։ Ն. Թ.

ընտրողները ձեռք էին բարձրացնում, երբ շերիֆը ներկայացնում էր թեկնածուներին։ Մի քանի ընտրող կենդրոններ խուլ գիւղեր էին. սրա կոչում էին փտած տեղեր։ Պիտտը չկարողացաւ անցկացնել ըէֆորմը այդ փտած տեղերը գնելու մասին։ Պարլամենտի տեղերը գրաւում էին արիստոկրատները և ունևոր տուզերը։ Այդպէս ուրեմն, 1814 թ. անգլիական կառավարութիւնը իրապէս օլիգարխիական էր։

Եկեղեցի։ Անգլիայում անգլիքան եկեղեցին պետական էր։ Երիցական եկեղեցին Շոտլանդիայում, իսկ կաթոլիկականը՝ Իրլանդիայում միայն իրապէս տանելի էր։ Անգլիքան հոգևորականութիւնը վարում էր աշխարհիկ գործեր ապահարզանի, ծնունդեան և կտակների օրինականութեան մասին, հասոյթ էր ստանում եկեղեցական կալուածներից և տասանորդ առնում ամեն հաւատացեալից։

Սոցիալական կազմը—որ իրաւարանօրէն ապահովում էր զինուորագրութիւնից և երաշխաւորում ընկերակցութիւնների և անձնաւորութեան ազատութիւնը, իրապէս չուևորներին կախման մէջ էր դնում զինուորագրողներից, գործարանատէրերից և ծխական վերակացուներից։ Հարուստ հողատէրերը պարլամենտում հացի օրէնքներ անցկացրին, որոնցով արգելվում էր օտար երկրի հացահատիկների ներմուծումը և հացի գները բարձրացրին։ Մինչդեռ Հիւսիսում և Արևմուտքում, որ առաջ սակաւարնակ էին, սկսում է խոշոր գործարանական արդիւնաբերութիւն։ Շոգու ոյժի գործածութիւնը, որպէս մեքենաշարժ գործօնի, պահանջում էր մեծ քանակութեամբ քարածուխ։ Սրանով էլ բացատրվում է խոշոր արդիւնաբերական կեդրոնների ծագումը հիւսիս-արևմտեան դքսութիւնների մէջ,

որոնք ներկայացնում էին քարածուխի ընդարձակ տարածութիւններ։ Այդպիսով Անգլիայի հարաւ-արևելքը կեդրոն է դառնում հողատիրական, պահպանողական կուսակցութեան, իսկ հիւսիս արևմուտքը՝ ընդհակառակը, քաղաքական պայքարի։

Իրլանդիայի ազգաբնակութիւնը պատկանում էր կաթոլիկ դաւանութեան, որ պաշտօնապէս արգելուած էր։ Իրլանդացի գիւղացիների մեծագոյն մասը հող չունէր, այլ կապալով էր վերցնում այն և երբեմն կապալը կրկնում էր սերնդէ սերունդ։ Հողը պատկանում էր անգլիական հարուստ կալուածատէրերին, որոնք և երկրի տէր էին համարում։ Մինչև 1800 թ. Իրլանդիայում կար առանձին պարլամենտ։ Բայց այդ թուականի փետրվար ամսից նա դադարեց գոյութիւն ունենալուց։ Ուիլեամ Պիտը օգտուեց նրա կաշառառութիւնից և վերջնականապէս ոչնչացրեց նրան։ Իրլանդիան վերջապէս պէտք է ձուլուէր Անգլիայի հետ, սակայն նրա ընտրողական սկզբունքը անփոփոխ մնաց, այսինքն, իւրաքանչիւր կապալառու, որի կալուածները տարին բերում էին 40 շիլլինգ [1]), ընտրողական իրաւունք էր վայելում, այնպէս որ համարեա բոլոր գիւղացիները ընտրողներ էին։ Իրլանդիան պահպանեց նաև իր կառավարութիւնը, սեփական փոխարքան, գաղտնի խորհուրդը և իր առանձին մինիստրը անգլիական մինիստրութեան մէջ, որ կոչում էր Իրլանդիայի գործերի քարտուղար։

Հարուստի և աղքատի մէջ եղած օրէցօր աճող անհաւասարութիւնը, կառավարութեան իրաւարանօրէն՝

[1]) Շիլլինգ=48 կոպ.

սահմանադրական ու ընտրողական, բայց խնդրում էր աղնուականական չինելը, սովորական կրոնը, սառերին դասակարգի չքաւոր և անգործ լինելը պահանջում էին անյապաղ բարենորոգումներ, բայց կառավարութիւնը և Տորի մեծամասնութիւնը չէր թոյլ տալիս, որ բէֆորմներ անցնեն։ Սարկութեան ոչնչացում, քրէական օրէնքների մեղմացում, կաթոլիկների իրաւանց հաւասարութիւն, ընտրողական և դպրոցական բէֆորմներ—ահա այն օրինագծերը, որոնց հեղինակները—Ուիլբերֆորս, Մէկինտոշ, Գրատտան, Գրէյ, Ռոսսէլ, Բրում—առաջուց գիտէին, որ իրենց նպատակներին հասնելու չէին բայց ուզում էին մարդկային միտքը սովորեցնել դժգոհութեան դէպի գոյութիւն ունեցող կարգը։

Ժէ դարում երևան են գալիս քաղաքական մեծ լրագիրներ («Times» 1785 թ. և այլն), որոնք նոյնած գրաքննական ծանր պայմաններին, նը-պաստեցին հասարակական կարծիքի արթնացման։ Այդ ժամանակ ծնունդ է առնում աշխատական կուսակցութիւնը, որ պահանջում է հիմնական վերանորոգումներ։ Տեսականօրէն նա հիմնւում էր Բենտամի վարդապետութեան վրայ (ուտիլիտարիզմ) և կուռում էր հին վիճակի հետ յանուն բանականութեան և ընդհանուրի բարեկեցութեան։ Կուսակցութեան պարագլուխն էր Կոբէդը, ծագումով գիւղացի, խմբագիր բանուորական հանրաժաչելի լրագրի։ Աշխատականները հասարակական չարիքի պատճառը խեղճ դասակարգի ընտրողական իրաւունքից զուրկ լինելու մէջ տեսնելով, կազմակերպում են հրապարակական միտինգներ [1]), արտասանում

[1]) Միտինգ (Meeting) կոչում է հրապարակական ժողով Անգլիայում, հասարակական կարծիքները ու շահերը յայտնելու համար։

են հրատապ ճառեր, որոնց մէջ բացատրում են իրենց պահանջները։ 1816 թ. միտինգը (Մնաֆիլդ, Լօնդօնի մօտ) այն յայտարարութիւնների հրաւէրով կազմուեց, որոնց մէջ ի միջի այլոց այսպէս էր նկարագրուած Մեծ Բրիտանիայի ժամանակակից վիճակը .«4 միլիոն մուրացկան, 1½ միլիոն կիսով չափ մուրացկան և ½ միլիոն հարուստներ, որոնք ապրում են շլացուցիչ շքեղութեան մէջ։ Մեր իռլանդացի եղբայրները աւելի վատթար դրութեան մէջ են»։ Կառավարութիւնը խորհրդարանում գաղտնի կոմիտեներ սահմանեց և այդպիսով հասաւ Habeas Corpus ակտի [1]) դադարեցման։ Այն ինչ աշխատականների ծրագիրը վերջնականապէս ձևակերպուեց Բերեատի ձեռքով, որ այդ ժամանակ աշխատական կուսակցութեան միակ ներկայացուցիչն էր։ Նա պահանջում էր ընդհանուր ընտրողական իրաւունք, գաղտնի քուէարկութիւն, ընտրողական շրջանների կանոնաւորում և ամեն ամեայ ընտրութիւններ։ Ծրագիրը չընդունուեց։ 1819 թուին միտինգ եղաւ Պետերլոում, Մանչեստրի մօտ, ուր հաւաքուած էր մօտ 50 հազար հոգի։ Կառավարութիւնը պատասխանեց մի շարք ճնշող միջոցներով և պարլամենտում անցկացրեց 6 հատ որոշում, որոնք կոչւում էին «բերան գոցող (փակող) օրէնքներ», ի միջի այլոց

[1]) Habeas Corpus-ի վճիռն ընդունուեց խորհրդարանում 1679 թուին, դրանով վերջնական կերպով որոշուեց որ իւրաքանչիւր բանտարկուած անգլիացի, իրաւունքն ունի պահանջելու, որ նրան 24 ժամուայ ընթացքում դատարանին ներկայացնեն, ցոյց տալով բանտարգելութեան օրինական պատճառները. դատարանը կարող էր հաստատել բանտով կալանքը կամ արձակել բանտածին։

արգութեամբ դատաստանի ենթարկելը, ժողովուրդու արգելումն, քաղաքական հրատարակութիւնների սահմանափակումն. բայց 1820 թ. մինիստրութեան մէջ են մտնում նորանոր մարդիկ, որոնք անցին կայնում մասնաւոր բէֆորմներ։ Այսպէս Պիլը ոչնչացնել տուաւ մահուան վճիռը մի քանի յանցանքների վերաբերմամբ. Գիսկիսոնը ոչնչացրեց մի քանի մաքսային հարկեր, թոյլատրեց բանուորականընկերակցութիւններ կազմել։ Այդ ժամանակներից սկսած բարեգործում են հաղորդակցութեան ճանապարհները, իսկ 1829 թ. շինուում է առաջին երկաթուղին Լիվերպուլի և Մանչեստրի միջև։

Իշխող կրօնն էր անգլիքանը։ Կաթոլիկները իրաւունք չունէին պետական ծառայութեան մտնելու։ Ուիլիամ Պիտը 1801 թ., իսկ իռլանդացի հռչակաւոր հռետոր Գրատտանը 1810 թ. աշխատում էին կաթոլիկների իրաւանց հաւասարութեան բիլը [1]) ընդունել տալու, բայց անյաջող։ Իռլանդացի կաթոլիկները հաւասարութեան հասնելու համար հիմնում են կաթոլիկական ընկերակցութիւն (1823 թ.) նշանաւոր հռետոր իրաւաբան Օ'Կոննելի ձեռքով։ Մի շարք մինիստրութիւններ (Լիվերպուլի, Կաննինգի, Ուելինգտոնի) զբաղւում էին կաթոլիկների ազատման խնդրով, մինչև որ վերջապէս Պիլին յաջողեց օրէնք անց կացնել, որով ջնջուեցին կաթոլիկների սահմանափակումները (1829թ.)։ 1830 թ.

1) Այդպէս է կոչում պարլամենտում քննող օրինագիծը։ Բիլը առաջարկում է գրաւոր և կարդացւում է (այսինքն քննում է 3 անգամ իւրաքանչիւր խորհրդարանում և միայն յետոյ առաջարկում է բարձրագոյն իշխանութեան հաստատման, այսինքն act (օրէնք) դառնում։ Սովորաբար բիլերի մեծագոյն մասը չէ դիմանում նոյն իսկ առաջին ընթերցանութեան։

ֆրանսիական յեղափոխութիւնը բաւականաչափ նպաստեց ընտրողական բէֆորմի շուտափոյթ ընդունելուն։ Շարժման կեդրոն դարձաւ Բիրմինգամը, որտեղ կազմուեց քաղաքական միութիւն, որի նպատակն էր ընտրողական բէֆորմի պրօպագանդ։ 1831 թ. Լոնդոնի հիւսները այդ նպատակով հիմնում են բանուորական դասակարգի Ազգային միութիւն։ Վերջապէս 1832 թ. լորդերի խորհրդարանում փոքրաթիւ մեծամասնութեամբ ընդունուեց ընտրողական բէֆորմը։ Ներկայացուցիչները առաջուայնման ընտրւում են 7 տարի ժամանակով, բայց դրա փոխարէն փտած տեղերը զրկուեցին ընտրողական իրաւունքից և ձայնաւորութեան վերաբերմամբ միատեսակ պայմաններ սահմանուեցին։ Ընտրողների թիւը բարձրացաւ և թէև բանուորների մեծագոյն մասը դեռ ևս ձայն չունէր, բայց երեսփոխանական խորհրդարանը այդ բէֆորմից ի վեր իսկապէս ներկայացուցչական հաստատութիւն դարձաւ։

II

Անգլիան 1832—1867 թ.

Այդ ժամանակները արդէն վերջնականապէս ձևակերպւում է Անգլիայի կառավարչական մարմինը։ Ասացինք, որ Անգլիայում վաղուց ի վեր իշխում էր պարլամենտական մեծամասնութիւնը, իսկ ինչ վերաբերում է թագաւորին, նա ոչ թէ իշխում էր, այլ միայն թագաւորում։ Այժմ տեսնենք, թէ ինչպէս է ընտրւում կառավարչական մարմինը։ Իշխանութիւնը միշտ դառնում է այն կուսակցութեան ձեռքին, որը մեծամասնութիւն

է կազմում երեսփոխանական խորհրդարանում։ Երբ իշխող կուսակցութիւնը դադարում է մեծամասնութիւն կազմելուց, այն ժամանակ իշխանութիւնը խլում է նրանից և տալիս մեծամասնութիւն կազմող կուսակցութեան։ Այդ նոր կուսակցութեան պարագլուխը ներկայացնում է թագաւորին իւր ապագայ կաբինէտի կազմը. թագաւորը հաստատում է. այնուհետև նոր կաբինետը, որ կուսակցութեան պարագլխի անունով է կոչւում, սկսում է գործել մինչև որ իր կուսակցութիւնը շարունակում է մեծամասնութիւն կազմել։ Իսկ նախկին կուսակցութիւնը դառնում է դիմադիր կուսակցութիւն, որովհետև սկզբունքով հակառակ է նորընտիր կառավարչական մարմնին։ Յայտնի է, որ Աֆրիկայում նեգրեր էին բռնում ու տանում վաճառելու. 1807 թ. ստրկավաճառութիւնը ոչնչացաւ կամ գոնեա դադարեց Անգլիայի մասնակցութիւնը այդ խայտառակ գործին. իսկ 1833 թ. արդէն անգլիական ազգը 20 միլ. ֆունտ ստերլինգ [1]) քուէարկեց Մեծ Բրիտանիայի հպատակներին պատկանող ստրուկների ազատութեան համար։

Տօրի և Վիգ կուսակցութիւնները այժմ արդէն կոչւում են պահպանողական և ազատամտական կամ աջակողմեան և ձախակողմեան (խորհրդարանում բռնած դիրքի համաձայն)։ Բացի 2 մեծ կուսակցութիւններից կազմուեցին արմատականը և իռլանդականը։

Ազատամտական կուսակցութիւնը գործի գլուխը կանգնելով մի շարք մասնաւոր ըէֆորմներ է անում. 1)

[1]) Ֆունտ ստերլինգը անում է 9 ռ.-50 կ. ուրեմն 20 միլ= 190 միլ. ռուբլու։

Ցատուկ ոստիկանական ծառայողներ (policemen) նշանակելով, բարեկարգեց Լօնդոնի ոստիկանութիւնը. 2) կեղեքումները վերացնելով, պակասցրեց խեղճերից առնուելիք հարկը, 7-ից 4 միլ. իջեցնելով. 3) բարեփոխեց քաղաքային վարչութիւնները (մունիսիպալիտէ), ընտրողական իրաւունքը վերապահելով բոլոր հարկատուներին և մտցրեց միատեսակ կազմակերպութիւն. մունիսիպալիտական ժողովները կազմվում են մէրից, օլդերմէրից՝ և խորհրդատուներից. 4) 1836 թ. օրէնքով նշանակուեցան արձանագրող պաշտօնեաներ, որոնց պարտականութիւնն է նորածինների, պսակադրողների և մեռածների ցուցակագրելը. 5) պատիժներից մտրակը և խայտառակ սիւնը ոչնչացան. 6) լոյս տեսան փոստային մարկաներ. 7) դքսութեան և ծխի մէջ կազմվում է կառավարչական մի նոր միաւոր—ընտրեալ կոմիսարների (լիազօրների) միութիւն, իսկ Լօնդոնում հիմնվում է տեղական վարչութեան բիւրո, որ ներկայացնում էր ներքին գործերի մինիստրութեան պէս մի հաստատութիւն։

Գործարաններից շահագործուող բանւորների դրութիւնը այնքան ցաւալի էր, որ օրինակ, 8 հոգուց բաղկացած ընտանիք ստիպուած էր փոքրիկ, նեղ սենեակում պատսպարուելու. այդպիսի ընտանիքի շաբաթական աշխատավարձը մինչև 8—10 շիլլինգ պակասեց։ Այս հանգամանքը իրան վրա դարձրեց մարդասէրների ուշադրութիւնը. դրանցից Ռոբերտ Օվէնը, որ բամբակի գործարանատէր էր, սկսեց քարոզել ընկերակցական միութիւնների մասին, այսինքն որ բանւորները միահամուռ եղած աշխատեն իրանց և

=չ թէ կապիտալիստների համար։ Համարուեստ բանուորները սկսեցին ընկերակցութիւններ կազմակերպել. պահանջեցին աշխատավարձի բարձրացումը և օրական միայն 8 ժամ աշխատանք։ Լոնդոնի բանուորների ընկերակցութիւնը—որը հիմնել է 1837 թ. Լովէտտ բանուորը, որ Ռոբերտ Օվէնի հետևող էր—միացաւ արմատականների հետ և խնդրագիր մատոյց, որի մէջ պահանջում էր ընդհանուր ընտրողական իրաւունք, գաղտնի ձայնատուութիւն, ռոճիկ ներկայացուցիչներին, ընտրողական ցենզի վերացում, ամենամեայ պարլամենտ և երկրի ճշգրիտ բաժանում ընտրողական շրջանների։ Այդ խնդրագիրը կոչուեցաւ «Ժողովրդի քարտէզ» [1])։ Քարտիզականների շարժումը ամբողջ 10 տարի տևեց (1838—1848) և նշանաւոր եղաւ մի շարք աղմկայոյզ միտինգներով ու «բանուորական պարլամենտով», որ գումարուեց Լոնդոնում (1839 թ.)։ Քարտիզականների առաջնորդներն էին իռլանդացի փաստաբան Օ'Կոննորը, Օ'Բրրիէնը, Ջոնսը և «քարտիզական բանաստեղծ»—Թոմաս Կուպէրը, որ մի կոշկակար էր։ 1848 թ. դրանցից առաջինը աղդարարեց առաջին միտինգի կոչը Լոնդոնում։ Այն խնդրագիրը, որ նա ներկայացրեց պարլամենտին, ունէր 1,975,000 ստորագրութիւն։ Որչափ աճում էր հասարակական բարեկեցութիւնը, այնքան թուլանում էր այդ շարժումը. սակայն պէտք է նկատել, որ նրա պահանջների մեծ մասը մտաւ օրէնսդրութեան մէջ։

Այդ ժամանակ կաթոլիկները պայքար էին մղում

[1]) Charter (չարտէր) բառից, որ նշանակում է քարտէզ. խնդրատուները այդտեղից կոչուեցին քարտիզական (չարտիստ։)

Իռլանդիայում։ Իռլանդական այդ շարժման գլուխն էր հռչակաւոր հռետոր Օ'Կոննելը։ Նա պահանջում էր, որ կաթոլիկ դաւանութիւնը միւս դաւանութիւնների հետ հաւասար իրաւունքներ և ազատութիւն ունենայ։ 1838 թուին ազատամտական մինիստրութիւնը օրէնք անցկացրեց, որի զօրութեամբ տասանորդը պէտք է տային ոչ թէ գիւղացիք, այլ հողատէրերը։ Այնուամենայնիւ իռլանդացիների դրութիւնը մնում էր անտանելի. նրանք գտնվում էին հողատէրերի կատարեալ իշխանութեան տակ, բնակվում էին ողորմելի խուղերի մէջ, ուտում էին համարեա թէ լոկ գետնախնձոր։ 1843 թուականը «իռլանդական ինքնավարութեան» համար մղող սաստիկ կռուի տարին էր։ 3 ամսուայ ընթացքում Իռլանդիայում մօտ 30 մեծամեծ միտինգներ եղան։ Օ'Կոննելը մեղադրուեց իբրև տէրութեան դաւադիր, բայց բարձրագոյն ատեանը արդարացրեց նրան և վճիռը ոչնչացրեց։

Բացի քարտիզական և իռլանդական շարժումներից կար և մի երրորդ շարժում՝ հացի օրէնքներ ոչնչացնելու համար։ Առաջին 2 շարժումը հալածուեցին հողատիրական և արդիւնաբերական ազնուականութեան կողմից, իսկ երրորդը, ընդհակառակը, սկիզբն առաւ արդիւնաբերական շրջաններում, որովհետև հացի վրա նշանակուած բարձր գները թոյլ չէին տալիս բանուորի աշխատավարձը իջեցնել։ Միւս կողմից հողատէր ազնուականութիւնը ոչ մի դէպքում չէր թոյլ տալիս, որ ներմուծուող հացի վրայ դրած մաքսը ոչնչացնեն։ 1838 թ. Մանչեստրում ընկերութիւն կազմուեց, որ կոչվում էր Anti-corn Low Leage (հացի օրէնքներին դէմ ընկերութիւն). դրա անդամները սկսեցին ժրաջանութեամբ գործել. պամֆլէտներ էին գրում, ժո-

ղովրդական ընթերցանութիւններ և միտինգներ կազմակերպում։ Ժողովրդին մատչելի դասախօսութիւնների մէջ նրանք ապացուցանում էին, որ հացի մաքսերը օգտակար են միայն հողատէրերին և վնասաբեր միւս բոլոր դասակարգերին, որովհետև մաքսը բարձրացնում է ուտելիքի գները և արգելում է արտասահմանեան հացահատիկների ներմուծումը ու դրա հետ միասին սպանում է անգլիական արտադրութիւնների արտահանումը։ 1846 թ. վատ բերքի պատճառով Ռոբերտ Պիլը ստիպուած էր հացի օրէնքների ոչնչացման հարցը դնելու, որը և ընդունուեց։ «Դուցէ բարի յիշատակ թողնեմ, ասում էր Պիլը, այն մարդկանց մէջ, որոնց ճակատագիրն է ամենօրեայ հացը սեփական քրտինքով աշխատել։ Դուցէ այդ մարդիկը երախտագիտութեամբ յիշեն ինձ, իրանց քայքայած ոյժերը առատ ու անմաքս սննդով վերականգնելիս. այդ սնունդը առաւել ևս համեղ կերևայ, քանի որ թունաւորուած չի լինի անարդարութեան գիտակցութիւնով»։

Մարդասէր Էշլին ընդունել տուաւ գործարանների օրէնք, որով սահմանուեց 8 ժամուայ աշխատանք 13 տարեկան երեխայոց համար։ Այդ կանոնադրութեան գործադրութեան համար կազմուեց գործարանական տեսչութիւն։ Բանուորներին վերաբերեալ օրէնքներից պէտք է յիշել, որ արգելուեց բերքով կամ ապրանքով վարձատրելը, որոշուեց նոյնպէս, որ կանայք և երեխաները չեն կարող հանքահորերում բանել (1824 թ.) և նրանք պէտք է աշխատեն օրական միայն 8 ժամ,

Օ'Կոննելի մղած պայքարը, ինչպէս արդէն տեսանք, վերջացաւ նրա դատապարտութեամբ։ Եռուն երիտասարդութիւնը թողեց նրա քաղաքականութիւնը

կազմակերպեց այսպէս ասած «Երիտասարդ Իռլանդիա» ռամկավարական և յեղափոխական մի կուսակցութիւն։ 1846 թ. սարսափելի սովից յետոյ երբ Իռլանդիայի ճանապարհները ծածկուած էին դիակներով և ազգաբնակութիւնը, որ 1858 թ. 8 միլ.էր, հասաւ 6½ միլ. (4½ միլ. 1891 թ), սկսուեց զօրեղ շարժման շրջան։ 1848 թ. կազմակերպուեցան իռլանդական ժողովարաններ և ֆրանսիական յեղափոխական կառավարութեանը օգնութեան խնդրագիր ուղարկուեց։ Շարժման պարագլուխները ձերբակալուեցան և աքսորուեցան։ Իռլանդական շարժումը կանգ առաւ։ Այդ ժամանակ անգլիական քաղաքական կեանքը ընդհատուեց արտաքին եղելութիւններից (Ղրիմի պատերազմ)։ Պալմերստոնի մինիստրութիւնը օղու մաքսը բարձրացրեց, իսկ թէյի մաքսը իջեցրեց։ Բանուորների վիճակը բարւոքվեց շնորհիւ բանուորական ընկերութիւնների (տրէդ - ունիօն), որոնք միանալով, ընդհանուր բանուորական միութիւն կազմեցին։ Նորից շարժում սկսուեց ընդհանուր ընտրական իրաւունքի համար. այդ նպատակով ահա տեղի ունեցան մի շարք ազմկալից միտինգներ (Տրաֆալգարեան պարտիզում, Հայդ-Պարկում), մինչև որ վերջապէս Դիզրայէլը կարողացաւ ընտրական իրաւունքի մասնաւոր ռէֆօրմ անց կացնել (1867 թ)։ Այդ ռէֆօրմը կայանում էր նրանում, որ պատգամաւորների տեղերը փոփոխութեան ենթարկուեցին և ընտրական ցենզը իջաւ։ Ամենայն մարդ, որ տալիս է առնուազն 10 ֆունտ ստերլինգ (մօտ 70 ռ.) ընակարանի վարձ, ձայն տալու իրաւունք ունի։ Այդպիսով բանուորների մեծագոյն մասը ընտրական իրաւունք ստացաւ և Անգլիան ռամկավարական տէրութիւն դարձաւ։

III

Ռազմավարական Անգլիա

Իռլանդիայում գլուխ բարձրացրեց յեղափոխական մի նոր կազմակերպութիւն։ Դա ֆէնիների գաղտնի ընկերութիւնն էր, որի նպատակն էր անկախ հանրապետական կառավարութիւն հաստատել Իռլանդիայում։ Այդ ընկերութեան անդամներից շատերը մասնակցել էին Ամերիկայի Հիւսիսային և Հարաւային նահանգների պատերազմներին։ Ընդհանուր ապստամբութիւն առաջ բերելու փորձը (1867) անյաջողութեամբ վերջացաւ։ Առաջնորդներից շատերը մահուան դատապարտեցան։ Այդ ժամանակ Գլադստոնը, հիմնուելով վերջին անկարգութիւնների վրա, յայտնեց իռլանդական բէֆօրմի անհրաժեշտութիւնը։ Նրան աջողեց արքունիս գրաւել անգլիքան եկեղեցու կալուածները, վերացնել տասանորդական հարկը և այդպիսով ոչնչացնել անգլիքան եկեղեցու գերիշխանութիւնը։ Բացի դրանից Գլադստոնի ջանքով հաստատած հողային օրէնքի (Landact, 1870) որոշմամբ հողատէրերին արգելվում էր իրանց կալվածներին արձակել մինչև լիովին չվճարէին այն բարեկարգութիւնների արժողութիւնը, որ կատարված էին նրանց ձեռքով։ Գլադստոնի ազատամտական մինիստրութիւնը պարտադիր համարեց տարրական ձրի ուսուցումն (1870 թ.), գաղտնի քուէարկութեան օրինագիծ անցկացրեց պարլամենտում, ճանաչեց բանուորական ընկերութիւնների գոյութեան իրաւունքը։ Հարկաւոր էր բաւարարութիւն տալ և արդիւնագործ ազնուականութեան. դրա համար «պար-

լամենտը քուէարկեց «մի յաւելում քրէական օրէնքին»։ Այդպիսով դուրս եկաւ, որ գործակալները թոյլատրվում էին, բայց նոցա աջողութեան նպաստող հանգամանքները ոչ։ Վերջապէս 1875 թ. պահպանողական կուսակցութիւնը մի նոր օրինագիծ անց կացրեց, որով ամեն մի գործողութիւն, որ թոյլատրուած էր մի մարդու (տիրոջ), թոյլ էր տրվում և խմբերի (բանուորներին)։ բայց սրանով էլ վերջանում է Դիզրայէլի մինիստրութեան գործունէութիւնը ներքին հարցերի վերաբերմամբ։ Սակայն արտաքին հարցերում նա աշխատում էր անգլիացիների հայրենասիրութիւնը արթնացնել։ Կառավարութիւնը օրէնք անց կացրեց, որով Թագուհին Հնդկաստանի կայսրուհի հրատարակուեց. մինչև անգամ փորձ արաւ հարաւային-աֆրիկական դաշնաւորութիւն կազմելու, սակայն դա պատերազմի պատճառ դարձաւ Տրանսվաալի հետ։ Այդ միջոցին պարլամենտում դիմադիր կուսակցութիւն կազմուեց, որ պահանջում էր իռլանդական ինքնավարութիւն։ Այդ կուսակցութիւնը յայտնի է Home-rull անուամբ, որի պարագլուխն էր Պարնելը, որ ամբողջովին նուիրուած էր իռլանդական անկախութեան գործին։ Նա բոլորովին նոր տակտիկա առաջարկեց Իռլանդիայի պատգամաւորներին, որ է խանգարել պարլամենտի գործերի ընթացքը, մինչև որ նա չդրաղուի իռլարդական գործերով։ Այս տակտիկը, որ օբստրուկցիոնիզմ (կապուին) կոչուեց, առաջ էլ յայտնի էր, բայց Պարնելը նրան մի առանձին սիստեմ դարձրեց։ Home rull-ի կուսակցութիւնը բաղկացած էր 3 այժից—Իռլանդիայի գիւղացիներից, որոնք կազմում էին ինքնապաշտպանութեան միութիւն—«Հողային լիգա» ընդդէմ լէնդ-լորդերի (1877), Իռլանդիայի պատգամաւորներից և Ամերիկա

գաղթած իռլանդացիներից, որոնք նիւթական օգնութիւն էին տալիս կռուի ժամանակ։ Հողատիրական ոճրագործութիւնները, այսինքն այն սպանութիւնները, որոնք կատարվում էին կալուածատէրերից վրէժխնդիր լինելու նպատակով, մեծ ծաւալ ստացան։ Իռլանդացիք յարաբերութիւն չպէտք է ունենային կալուածատէրերի հետ։ Կռուի վերջին եղանակը, որ փորձուեց Բոյկոտ կապիտանի վրայ, բոյկոտիզմ [1]) կոչուեց։ Կառավարութիւնը նոր օրէնք առաջարկեց։ Առաջին անգամ կապալառուները իրաւունք ունէին պահանջելու, որ կապալային մշտական վարձ սահմանուի 15 տարի ժամանակով։ Բայց իռլանդացիք շարունակում էին պայքարը։ Դուբլինում գումարուած «Ազգային ժողովը (1200 պատգամաւոր) որոշեց, որ «բոլոր քաղաքական և սոցիալական չարիքների պատճառը օտարի տիրապետութիւնն է» (1881 թ.)։ Կառավարութիւնը մի շարք ձերբակալութիւններ արաւ. բայց յետոյ նորէն դարձաւ հաշտարար քաղաքականութեան։ Սակայն իռլանդացիների մէջ արդէն կազմուել էր «Անյաղթների յեղափոխական ընկերութիւն»։ Տեղի ունեցան սպանութիւններ, հասարակական հաստատութիւնների պայթումներ։ «Անգլիացիներից զիջումներ գչլելու միակ միջոցը տերրորն է», ազդարարում էին «անյաղթները»։

Ընտրողական իրաւունքը 1884-85 թ. հաւասար պայմաններ ստեղծելով ոչնչացրեց անհաւասարութիւնը, որ կար մէկ կողմից քաղաքների և միւս կողմից կոմսութիւնների պատգամաւորութեան մէջ։ Սակայն այս միջոցն էլ արմատական չէր։

Այսպէս պահպանուեց 2 տեսակ ընտրողական իրաւունք—տանտիրոջ և վարձարնակի, իսկ դա առաջացնում էր բարդութիւններ. մի քանի տուն ունեցողը մի քանի անգամ էր ընտրող լինում, մինչդեռ տուն չունեցողները և չունևոր վարձարնակները (օրինակ, բանւոր դասակարգը) զրկուած էին ձայն տալու իրաւունքից։ Բացի դրանից ընտրութիւնները տեղի չէին ունենում միևնոյն օրը ամբողջ երկրում և պատգամաւորները չնայած իրանց խոշոր ծախսերի, ոռճիկ չէին ստանում։

Այդ ճամանակ Պարնէլը առաջարկեց Իռլանդացիներին աւելի զօրեղ տակտիկա քան օբստրուկցիոնիզմը։ Իռլանդական կուսակցութիւնը, թէև առանձին վերցրած, մի նշանաւոր ոյժ չէր ներկայացնում, սակայն շատ անգամ նրանից կախուած էր լինում այս կամ այն կուսակցութեան բախտը. եթէ բոլոր կուսակցութիւնները փոքրամասնութիւն կազմէին, այն ժամանակ Իռլանդական կուսակցութիւնը մեծամասնութիւն կազմելու անհրաժեշտ ժամն էր հանդիսանում և այդ պատճառով էլ նա կարող էր իր պահանջները թելադրել, իր շահերը պաշտպանել։ Այդ հանգամանքից ուզեց օգտուել Պարնէլը։ Գլադստոնը Իռլանդացիների հետ միասին արմատական ըէֆօրմ (Home—rull) էր պահանջում. սակայն նրանից մի հատուած անջատուեց—ունիա (միութիւն)։ Ունիոնիստները անհրաժեշտ էին համարում Իռլանդիան միացնել Անգլիային։ Երբ Իռլանդիայի և նրա ինքնավարութեան հարցը պարլամենտին դրուեց, Իռլանդիայում կազմուեց անգլիական ազգային կուսակ-

1)Մէկին իր կալուածքից վռնտել ընդհանուր համաձայնութեամբ, երբէք նրա հողի վրա չբանելով և նրա հետ ամեն կապեր խզելով։

ցութիւն (այսպէս ասած օրանժականներ), որ գործում էր ընդդէմ Home—rull-ի։ Ուլստէրի 30 հազար կանայք ստորագրեցին և մատուցին կայսերուհուն մի խնդրագիր, որ գրուած էր Իռլանդական ինքնավարութեան ընդդէմ։ Թունդ վիճաբանութիւններից յետոյ 30 ձայների առաւելութեամբ օրինագիծը մերժուեց (1886)։ Գլադստոնը արձակեց խորհրդարանը, որպէսզի նոր ընտրութիւնները հարցը վճռէին։ Սա հոմրուլականների և ունիոնիստների կռիւն էր։ Գլադստոնը պարտութիւն կրեց։ Երկրի կառավարութիւնը անցաւ ունիոնիստների ձեռքը (1886—1892 թ.). սրանք յայտարարեցին, թէ այն սեփականատէրերը, որոնք կհրաժարուեն կապալավարձը իջեցնելուց, պաշտպանութիւն և հովանաւորութիւն կգտնեն իրանց դրօշակի տակ։ Իռլանդացիք նոր տակտիկով պատասխանեցին, որ կոչուեցաւ «պատերազմի ծրագիր»։ Կապալավարձ չպէտք է տալ, եթէ հողատէրը չէ համաձայնում յանձնաժողովից որոշուած վարձին, ահա թէ ինչ էր ասում նոր տակտիկը։ Բայց կռիւը անխուսափելի դարձաւ։ Տէրութիւնը խիստ միջոցների դիմեց։ Հողային լիգան վտանգաւոր հռչակուեց. նրա պարագլուխները մեղադրուեցան և բանտարկուեցան։ Իռլանդական կուսակցութիւնը պատասխանեց դժգոհութեան միտինգով, որ ուղղուած էր Իռլանդիայի գործերի քարտուղար Ա. Բալֆուրին դէմ. վերջինս հետևում էր ճնշող սիստեմին (1889 թ. Լոնդոն)։

1888 թ. կառավարչական բէֆորմ անց կացրին. հին կոմսութիւն անունով հողային և կառավարչական նոր միաւոր սահմանուեց, որ բաղկացած էր խորհրդատուներից (օլդերմէն) և նախագահից։ Այդ ժամանակամիջոցում Իռլանդական կուսակցութիւնը բո-

լորովին կորցրեց իր նշանակութիւնը։ Պապը իր շրջաբերականի մէջ դատապարտեց «պատերազմի ծրագիրը»։ Պարնէլի վարկը կոտրուեց մի խայտառակ դատից յետոյ, որը պատճառ դարձաւ կուսակցութեան 2-ի բաժանման. դրանք այլևս չվիացան նոյն իսկ Պարնէլի մահից յետոյ (1891 թ.)։

Մօտաւորապէս այդ ժամանակները Անգլիայում ծագեց մի նոր կուսակցութիւն—սոցիալիստական։ Մինչև այդ կուսակցութեան կազմուելը գոյութիւն ունէին 2 ընկերութիւններ, որոնք յարձակվում էին խոշոր հողատիրութեան վրա. մէկը, շոտլանդականը հիմնուած էր Ըօլլէս նատուրալիստի ձեռքով 1880 թ., յօգուտ հողի ազգայնացման և միւսը, դաշնակցութիւն՝ յօգուտ հողի վերաբաշխման. դա հիմնուած էր Հենրի Ջորջի հետևողների ձեռքով։ Սոցիալական բէֆորմի գաղափարը շուտով չարձարձուեց բանւոր դասակարգի մէջ։ «Սոցիալական դաշնակցութեան» միայն գործադուլի շրջանում աջողուեց բանւորական ցոյց կազմել։ Սոցիալական դաշնակցութիւնը հիմնուեց 1880 թ. Մարկսի հետևող Հայդմանի ձեռքով, բայց դեռ 1883 թ. նրանից անջատուեցին մի խումբ լուսաւորուած երիտասարդներ, որոնք հիմնեցին Ֆաբիոս *) ընկերութիւն։ Ինչպէս ինքն անունը ցոյց է տալիս, դրա գործունէութեան եղանակը կայանում էր յարմար միջոցի սպասելուն մէջ։ Միայն աստիճանաբար կարելի է բարեփոխել գոյութիւն ունեցող կարգը։ Այդ պատճառով նախ և առաջ պէտք է բոլոր կուսակցութիւնները տոգորել սոցիա-

*) Այդպէս կոչուեց հռոմայեցի հռչակաւոր զօրավար Ֆաբիոսի անունով, որը իր դանդաղութեան համար կունտատոր (դանդաղկոտ) մականուն ստացաւ։

լիստական դաղափարներով. այստեղից հետևում է այդ ընկերութեան հրատարակչական լայնածաւալ գործունէութիւնը։ Բանւորական ընկերակցութիւնները (տրէդ ունիոն) սկզբունքով համաձայն էին վերոյիշեալ սոցիալական ընկերութիւնների պահանջներին՝ հողի ազգայնացման (1888 թ.) և օրական 8 ժամ աշխատանքին (1890 թ.)։ 1892 թ. ընտրութիւնների ժամանակ ընտրուեցան 2 առաջին սոցիալական պատգամաւորներ։ Գլադստոնի մինիստրութիւնը պահանջում էր արմատական ռէֆորմներ, ոռճիկ պատգամաւորներին և անգլիքան եկեղեցու բաժանում պետութիւնից։ Առաջին ռէֆորմը թէև անցաւ երեսփոխանական խորհրդարանում, բայց լորդերը մերժեցին։ Գլադստոնը յոգնած լինելով երկարատև վիճաբանութիւններից (82 օր) իւր տեղը զիջեց Լորդ Ռոզեբրիին։ Դրան աջողեց անց կացնել ծխական ընտրողական խորհուրդների հաստատութիւնը, որոնց շնորհիւ գիւղացիները առաջին անգամ ինքնավարութիւն ստացան։ Այդ շրջանին է վերաբերում այն պայքարը, որ ծղվում էր պատգամաւորական խորհրդարանի սահմանադրութիւնը բարեփոխելու համար։ Ռամկավարական ռէֆորմները գլուխ բերելու համար անհրաժեշտ էր կամ բարեփոխել և կամ թէ չէ բոլորովին ոչնչացնել լորդերի խորհրդարանը։ Բայց այդ պայքարը ոչ մի դրական հետևանք չունեցաւ։ 1893 թ. «բանւորական ազատ կուսակցութիւն» կազմուեց—բուն սոցիալական ծրագրով—յոգուտ հողի և կապիտալի ընդհանրացման, բայց այդ ընկերութեան թեկնածուներից ոչ մինը չընտրուեց 1895 թ. ընտրութիւնների ժամանակ։ Ունիոնիստները նորից կառավարութեան գլուխ անցան։

Այդպիսով վերջացնելով Անգլիայի քաղաքական կեանքի տեսութիւնը պետք է ասել, որ նրա հին քաղաքական վիճակն ենթարկուեց մի շարք ներքին խորունկ բարեփոխութիւնների։ Դեռ 1814 թ. Անգլիան իսկապէս կառավարվում էր ազնուականութեան ձեռքով։ Վերջինս էր իշխում երկրի թէ՛ քաղաքական և թէ հասարակական կեանքում։

Թէև կառավարութիւնը մինչև այսօր պահպանել է իր հին կազմակերպութիւնը, բայց արդէն ռամկավարական է շնորհիւ ընտրողական սկզբունքին։ Երեսփոխանական խորհրդարանը դարձաւ ժողովրդի պատգամաւորների ժողովարան և, թագաւորին ու լորդերին իշխանութիւնից հեռացնելով, սկսեց համարեա ինքնուրոյն կերպով կառավարել երկիրը։ Այս տեսակ էվոլիւցիան մեծ կախումն ունէր անգլիական պետութեան բազմազան կազմից։ Միայն այսպէս ասած «Հին Անգլիան» (Հարաւը և Արևելքը) ազնուական ու անգլիքան էր։ Այդպէս է մինչև այժմ։ Իսկ Շոտլանդիան ռամկավարական ու երեցական էր. Վալլիսի և Հիւսիս-Արևմտեան Անգլիայի բնակիչներն էլ պահանջում էին իրերի ուրիշ դրութիւն։ Եւ ահա այս տարբերից կազմուել և մինչև օրս կազմվում է դիմադիր կուսակցութիւնը, որ հակառակ է անգլիական ազնուականութեան և հոգևորականութեան։ Ռամկավարական կարգին անցնելը կատարվում է դանդաղօրէն, պայմանադրութիւնների (կոնստիտուցիոնների) միջոցով, որովհետև անգլիական ժողովուրդը խոնարհվում է օրինականութեան առաջ։ Այդպիսով նա այնուամենայնիւ համարեա թէ հասաւ ընդհանուր ընտրողական իրաւունքին, համարեա ձեռք բերեց պարտադիր տարրական ուսում, դաւանութեան

հաւասարութիւն, տեղական ինքնավարութիւն և բանաւորական կատարեալ ռամկավարական օրէնսդրութիւն։

Վերջացնելով Անգլիայի 19-րդ դարի քաղաքական կեանքի պատմութիւնը, իբրև վերջաբան առաջ կբերենք Գէորգ Գերվինուսի սքանչացած կարծիքը՝ անգլիական պետական կազմի մասին. «Անգլիայի պետական կազմակերպութիւնը ներկայացնում է հէնց այն խառն սահմանադրութիւնը, որի մէջ ժողովրդական դասակարգերը հանդիսանում են մէկզմէկու կողքին, իւրաքանչիւրը որոշ իրաւունքներով, որի մէջ զանազան տարբեր կապակցվում են այնքան բարեյաջող կերպով, որ պատմութիւնը, այդ սահմանադրութիւնը ստեղծելով, կարող էր կանգնել և աղդարարել, թէ ահա օրինական արարածս...։ Դասակարգերը և պետական իշխանութիւնները, պաշտպանելով իրանց փոխադարձ շահերը կազմում են մեծ անկիւնաքարեր, որոնց միաւորութիւնից բարձրացել է պետական շէնքը, որ արտասովոր ամրութիւն ունի։ Դժուար է ասել թէ դոցանից ո՞րն է այդ շէնքին բնաւորութիւն, ոյժ և անուն տուողը։ Եթէ ի նկատ առնենք կառավարութեան միութիւնը, թագաւորական veto-ն, ոյժն ու զօրութիւնը, որ այդ միութիւնը տալիս է Անգլիայի արտաքին յարաբերութիւններին, այն ժամանակ կթուայ, որ մարդ գտնվում է միահեծան պետութեան մէջ։ Եթէ նայենք բարձր եկեղեցուն, որի, գլուխն է թագաւոր—պապը, կթուայ, որ տեսնում ես ասուածապետական surrեr։ Եթէ նայելու լինենք ամբողջ հասարակական ոգուն, պահպանողական և յաջորդական քաղաքականութեան, այն անձանց, որոնց ձեռքում գտնվում է ղեկը, իրաւունքի բնաւորութեան, կեանքի վարք ու բարքին

ժողովրդի պատգամաւորութեան, ապա կերևի որ տէրութիւնը զուտ ազնուապետական է։ Բայց երբ մտածում ենք, որ հարկեր նշանակելու իրաւունքը վերապահուած է բացառապէս երեսփոխանական խորհրդարանին, կարող ենք ասել, որ բարձր բուրժուազիան է գերակշռող տարրը։ Եթէ քննելու լինենք առանձին հաստատութիւնները, մասնաւոր անձանց գործունէութիւնը և անկախութիւնը, վարչութեան ապակենդրոնացումն, ինքնավարութիւնը, անհատի և սեփականութեան լայն ազատութիւնը, երկիրը պաշտանելու սիստեմը, ընկերակցութիւնների և մամուլի իրաւունքը, այն ժամանակ կթուայ, որ ամեն ինչ ռամկավարական է։ Ռամկավարական է և բարձրագոյն իշխանութիւնը՝ օրէնսդրութիւնը, որովհետև պատկանում է ժողովրդին ի դէմս իւր ձեռքով ընտրած պարլամենտին. և միևնոյն ժամանակ չկայ մի ժողովուրդ, որ այդչափ քիչ խօսէ իւր բարձրագոյն իշխանութեան մասին և որը աւելի սերտ կերպով կապած լինի միապետութեան, քան անգլիական ազգը»։

ԱՆԳԼԻԱՅԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

IV

Քաղաքական գործիչներ

Քաղաքական առաջադիմութեան շարժիչն է կուսակցութիւնների կռիւը։ Եթէ այդ կռիւը դադարէր, «հասարակական կեանքը կանգ կառնէր և պետական մարմինը կսկսէր քայքայուել. այդ պատճառով քաղաքական կուսակցութիւնները պարլամենտականութեան մարմին ու արիւն են կազմում...»։ Ազատամտական կուսակցութեան պարագլուխն էր հռչակաւոր քաղաքական հռետոր Ուիլլիամ Էդուարդ Գլադստոնը։ Նա ծնուել է 1809 թ. Լիվերպուլում, հարուստ վաճառականի ընտանիքում։ Հայրը տուեց նրան կենդանի հետաքրքրութիւն դէպի հասարակական կեանքը և պահպանողական աշխարհահայեացք կեանքի վրա։ Մայրը ներշնչեց խորին կրօնասիրութիւն և սէր դէպի բանաստեղծութիւնը։ Գլադստոնը ստացել է միջնակարգ կրթութիւն Իտոնական աղնուական դպրոցում։ Այստեղ նա գործունեայ մասնակցութիւն է ունենում աշակերտական ընկերութիւնների մէջ, խմբագրում է աշակերտական թերթեր և ինքն էլ բեղմնաւոր աշխատակից է հանդիսանում։

Իտոնական դպրոցը աւարտելուց յետոյ Գլադստոնը մտնում է Օքսֆորդի համալսարան։ «Ես չբտարայ Օքսֆորդից, ասում է նա, այն ինչ որ ձեռք բերի միայն վերջը—մարդկային ազատութեան դարաւոր և անգնահատելի սկզբունքներ գնահատելու ընդունակութիւնը։ Համալսարանում տիրում էր ինչ որ կասկածաւոր վերաբերմունք դէպի ազատութիւնը»։ Դրա փոխարէն, անկասկած, նա դուրս բերեց ճարտասանական հմտութիւն և հակաճառելու ընդունակութիւն ու մի խօսքով, «վիճաբանողի» տաղանդ, որ կարող էր այդչափ յաջող կերպով մշակուել միայն ուսանողական շրջանում, ուր կազմվում էին ճիշտ որ պարլամենտական ժողովներ։ Գլադստոնը հիմնադիր ու նախագահ էր գրականական ընկերութեան, որ իւր ազգանուան սկզբնատառերով կոչվում էր WEG, և գործեց անդամ մի ուրիշ ընկերութեան «Union», որտեղ կրակոտ ճառ խօսեց ընդդեմ բէֆորմի օրինագծին։ 1832 թ. սկսվում է նրա պարլամենտական գործունէութիւնը տօրիների կուսակցութեան մէջ։ 1852 թ. նա վերջնականապէս դուրս է գալիս պահպանողական կուսակցութիւնից. իսկ 1866 թ. ազատամտականների գլուխն է անցնում։ Նրա շնորհիւ 1867 թ. օրինագիծը լայն ազատամտական բէֆորմի գոյն ստացաւ։ Գլադստոնի նշանաւոր գործերն են՝ պետական եկեղեցու ոչնչացումն Իրլանդիայում, արմատական բէֆորմ ժողովրդական տարրական կրթութեան գործում, պաշտօնների վաճառման ոչնչացումն զօրքի մէջ, ընտրութիւնների ժամանակ գաղտնի ձայնաւորութեան ներմուծումն, իռլանդական հողային օրէնքը և պարլամենտական երրորդ բէֆորմ (1885 թ.)։ Նրա գործունէութիւնը յօգուտ իռլանդական ինք-

նավարութեան (հոմ-ռուլ) արդէն յիշեցինք։ «Ազատամտութեան սկզբունքը, ասում է Գլադստոնը, դէպի ժողովուրդը տածած վստահութիւնն է, որ սահմանափակվում է խոհեմութեամբ. պահպանողական սկզբունքը դէպի ժողովուրդն ունեցած անվստահութիւնն է, որ սահմանափակվում է երկիւղով»։ Գլադստոնը վախճանուեց 1898 թ.։

Պահպանողական կուսակցութեան ղեկավարն էր Բենիամին Դիզրայէլի, լորդ Բիկոնսֆիլդը։ 1867 թ. նա պարլամենտ մտցրեց ռէֆորմի մի օրինագիծ, որ նախկին բոլոր օրինագծերի համեմատութեամբ ուղղակի արմատական էր։ Այս օրինագիծը անց կացնելու ժամանակ ցոյց տուած անընկճելի հաստատամտութիւնը քաղաքական յաղթական դափնիներով պսակեց նրա անունը։ Դերբի դուքսի մահից յետոյ (1869 թ.) Բիկոնսֆիլդը պահպանողական կուսակցութեան գլուխն անցաւ, որի ղեկավարն եղաւ մինչև իր մահը (1882 թ.)։ Նրա գործունէութեան ծրագիրն էր գլխաւորապէս սոցիալական ռէֆորմ, երկրի և բանուորների ընդհանուր առողջապահական պայմանների բարելաւում։ Մինչև Բիկոնսֆիլդը պահպանողական կուսակցութիւնը անշարժ էր, եթէ չասենք որ յետադրական, իսկ Բիկոնսֆիլդը նրան չափաւոր առաջադիմական կուսակցութիւն դարձրեց։

Ներկայումս երեսփոխանական ժողովում ունիոնիստների գլուխն է Զեմբերլէնը։ Նա պետական գործիչների առաջին շարքը մտաւ ոչ թէ իր տիտղոսի կամ հարստութեան պատճառով, ինչպէս Սալիսբերին և Բալֆուրը, այլ բացառապէս իր աչքի ընկնող կորովի և բարոյական ոյժի շնորհիւ։ Ժոզէֆ Զեմբերլէնը ծն.

1836 թուին։ Նա բաժանուեց Գլադստոնից իռլանդական ինքնավարութեան հարցի պատճառով և յարեց ունիոնիստներին։ 1895 թ. Սալիսբիւրի կաբինէտում Զեմբերլէնը գաղութների մինիստրի պատասխանատու պաշտօնն ունէր։ Թէ ինչ աշխարհայեացք ունի պետական խնդիրների վերաբերմամբ, որոշակի երևում է 1883 թ. Բրիստոլում արտասանած ճառի հատուածից, որով պաշտպանեց ընտրողական իրաւունքի ընդլայնման օրինագիծը, որ ընդունվեց 1884 թ.։ «Սոցիալական մեծամեծ հարցերը բաւարար վճիռ կարող են ստանալ միայն այն ժամանակ, երբ ամբողջ ժողովուրդը մասնակցութիւն ունենայ օրէնսդրութեան մէջ։ Կրօնական կատարեալ հաւասարութիւն, ձրի ուսումն, խեղճ դասակարգի բնակարանների բարւոքում, հողագործ բանուորների դրութեան բարելաւում, ժողովրդական հսկողութիւն ոգելից խմիչքների վաճառման վրա և հարկերի մի այնպիսի սիստեմ, որ ամեն մէկը վճարէ իւր կարողութեան համեմատ—ահա այն հարցերը, որոնց, ես կարծում եմ, կատարելապէս համաձայն է ժողովրդի մեծամասնութիւնը, բայց որոնց վճիռը կկախանուի, մինչև որ ամբողջ ժողովուրդը ձայն չունենայ պետական ծառայութեան մէջ։ Սրանք այնպիսի հարցեր են, որոնց քննութիւնը հաճելի չէ այն մարդկանց, որոնք առհասարակ ընդդէմ են ամենայն փոփոխութեան»։

V

Կրթութեան գործը

Թէ կրթութեան սիստեմի և թէ այդ կրթութեան ծաւալման տէսակէտով Անգլիան պէտք է առաջին տե-

ղը դասել եւրոպական բոլոր տէրութիւնների մէջ։

Զօրանոցային ոգին, որ այնքան յատուկ է ցաժաքի դպրոցներին, գոյութիւն չունի անգլիական ուսումնարաններում։ Այդ տեղ կայ թարմ օդ, լայն տեղ, ազատութիւն։ Աշակերտների վրա ամեն բոպէ չեն հսկում զանազան դաստիարակներ ու վերակացուներ։ Տղաները իրանց սեփական կարգապահութեան են յանձնուած և պէտք է տեսնել, թէ ինչպէս բոլորովին անկախ կարողանում են խմբեր կազմել ուշադիր և աշխոյժ աշակերտներից, պահպանում են ընկերական ոգին և միևնոյն ժամանակ լուրջ են վերաբերվում դէպի իրանց պարտականութիւնները։ Ամեն մի դպրոց իր ժողովարանները ունի՝ մարմնամարզական, ֆուտ-բոլ, կրիկէտ, վիճաբանութեան ընկերութիւն։ Ուսուցիչները, ինչպէս աւագ եղբայրներ, սիրով մասնակցում են տղայոց խաղերին։ Իւրաքանչիւր գիշերօթիկ ունի իր առանձին փոքրիկ սենեակը։ Նա զարդարում է իր բնակարանը, ինչպէս սիրտը տալիս է, սովորաբար ընտանեկան և ականաւոր մարդկանց պատկերներով։

Վիճաբանութեան ընկերութիւնը գումարվում է գրադարանի շինութեան մէջ։ Նիստերի արձանագրութեան ցուցակից տեղեկանում ենք, թէ ինչ հարցեր են շօշափվում այդտեղ. «Ռամկավարութիւնը ներկայացնում է արդեօք կառավարութեան ամենալաւ ձևը». «Անգլիան արդեօք պէտք է մասնակցի եւրոպական պատերազմներին»։ Ժողովները ունենում են նախագահներ, գանձապահներ, և քարտուղարներ։ Համարեա ամեն մի դպրոց իր թերթն ունի։

Կեմբրիջի և Օքսֆորտի համալսարանները այդ երկրի բարձրագոյն կրթութեան մեծ դաստիարակներն

են։ Նրանք կատարեալ ինքնավարութիւն են վայելում, անագին կարողութիւն ունեն, կառավարում են տասնեակ հաւաքական ժողովներ, ունեն շատ հարուստ գրադարաններ, հրաշալի կերպով կարգաւորած թանգարաններ, լաբորատորիաներ, բուսաբանական պարտէզներ, նկարների գալերիաներ։ Պարապմունքներից յետոյ ուսանողները ժամանակ են անցկացնում համալսարանական ժողովարանում։ Օքսֆորտի The Union կոչուած ժողովարանում կան ընթերցարաններ, սրճարան, բիլլիարդներ, պարապուելու առանձնասենեակներ, գրադարաններ, անագին խորհրդակցական դահլիճ, ուր հաւաքվում են ժողովարանի անդամները հերթական հարցերը քննելու համար։

Շատ հետաքրքիր է կանգ առնել համալսարանական կրթութիւն տարածող նշանաւոր ընկերութեան վրա (Universtity Extension). այդ ընկերութիւնը հիմնել է 1876 թ. պրոֆէսոր Ջեմս Ստիւարտը։ Դրա անդամ կարող է լինել ամեն մի մարդ, որ տալիս է տարեկան 2 գիննէ (մօտ 20 ր.)։ Կրթական մասի կառավարիչն է «Միացեալ ժողովը», որ բաղկացած է Օքսֆորտի, Կեմբրիջի և Լօնդօնի համալսարանների պատգամաւորներից։ Լօնդօնում կան 66 տեղական մասնաժողովներ, որոնք իրանց մասերում համալսարանական դասախօսութիւններ են կազմակերպում։ Տարուայ ընթացքում կարդացվում է ընդհանուր առմամբ մօտ 150 դասընթաց և ունի մօտ 16 հազար ունկնդիր։

Դասախօսութեան վերջը դասախօսները իրաւունք են տալիս ունկնդիրներին հարցեր տալու, յետոյ գրքեր են առաջարկում ընթերցանութեան համար և նկատողութիւններ են անում ուսանողական ուղղագրած աշ-

խատութիւնների վերաբերմամբ։ Ունկնդիրների կազմը շատ բազմազան է. տարրական դպրոցների ուսուցիչների և վարժուհիների հետ միասին դուք կտեսնէք գործակատարներ, արհեստաւորներ, վաճառականներ և այլն։ Դասախօսութեան նիւթը միշտ նեղ-գործնական չէ լինում. այսպէս օրինակի համար, ոստայնանկների և ածխագործների լսարանում ի միջի այլոց դասախօսուել են «Պերիկլէսի դարը», «Ֆլօրենցիայի պատմութիւն», «Ի՞նչպէս առաջացաւ ժամանակակից Եւրոպան», «Ֆրանսիական յեղափոխութիւն», «Շեքսպիրը» և այլն։

VI.

Մամուլ

Անգլիական մամուլը կատարեալ ազատութիւն վայելելով, աչքի ընկնող հասարակական ոյժ է ներկայացնում։ Իւր արտասովոր արժանութեամբ հանդերձ *) անգլիական լրագիրը յայտնի է լուրերի լիութեամբ և ճշդութեամբ. դրան հասնելու համար ոչինչ չէ խնայում։ Յայտնի է օրինակի համար, որ «Times» (Թայմս) լրագրի թղթակիցները իշխանավայել ռոճիկ են ստանում և ապրում են արտասահմանում, փոքրիկ տէրութեան իսկական հիւպատոսների նման։

«Թայմսի հաւարը, ասում է Մակ Լեկլերկը, ամբողջ երկրագնդի վերջին օրերի անթերի կերպով հաւաքած մանրամասն պատմութիւնն է»։

Առաջ կրերենք մի փաստ անգլիական լրագրի

*) Անգլիական լրագիրների մեծագոյն մասը արժէ մի պէնս, այսինքն 4 կոպ., բացի «Times», որ արժէ 3 պէնս (12 կոպ.)։

այն պատրաստականութիւնը պատկերացնելու համար, որ չգիտէ կանգ առնել ոչ մի զոհողութեան առաջ և ճիշտ տեղեկութիւններ ստանալու համար։ Բուէնոս—Այրէսում պատահած վերջին տնտեսական և քաղաքական տագնապի ժամանակ «Թայմսի» թղթակիցը ժամ առ ժամ հեռագրում էր լրագրին տագնապի մանրամասնութիւնները. 2 օրում խմբագրութիւնը 14 հազար ռուբլի ծախսեց, բայց դրա փոխարէն այդ խմբագրութեան շնորհիւն էր որ հարաւային ամերիկական դէպքերը 3 շաբաթ առաջ յայտնի էին լինում եւրոպական կապիտալիստներին։ «Թայմսը» հիմնուել է 1785 թ. յունուար 1-ին Ջոն Վալտերի ձեռքով։ Միւս լրագիրներից կյիշենք ազատական կուսակցութեան գլխաւոր և ամենաազդեցիկ օրգան «Daily News», որ ցրվում է 300 հազար օրինակ. «Daily Telegraph» ազատամիտ լրագիրը, որ ցրվում է 240 հազար օրինակ. լորդ Սալսբերիի կիսապաշտօնական օրգան «Standart» (250 հազար օրինակ) և այլն։ 1891 թ. Անգլիայում հրատարակվում էր 2263 լրագիր և 1882 ամսագիր, այսինքն միասին վերցրած 4145 պարբերական հրատարակութիւններ, որոնցից 1400-ը Լօնդօնում։

Թէ Անգլիայում որքան արժան են ձեռք բերվում դրքերը կարելի է տեսնել հետևեալ թուերից, որ բերում է Լօրդ Բոզբերրին 1892 թ. Հայդ-Սարիտում ձրի գրադարանի բացման առթիւ արտասանած ճառի մէջ։ Ամբողջ Շեքսպիրը, օրինակի համար, կարելի է ձեռք բերել 9 պէնսով (35 կոպ.)։ Հէնց նոյն գնով կարելի է առնել Միլտոնի բոլոր աշխատութիւնները։ Հատորին 4½ պէնս (18 կոպ.) տալով համարեա կարելի է ամբողջ Դիկկէնս ձեռք բերել։

Զարմանալի չէ ուրեմն, քանի որ տարրական կըրթութիւնը պարտադիր է ու ձրի և գրքերն ու պարբերական հրատարակութիւնները այդչափ արժան են, որ իւրաքանչիւր անգլիացի իւր սիրած հեղինակների գրադարանն ունի։

Բացի դրանից իւրաքանչիւրը բաժանորդ գրուած է որ և է ընթերցարանի։

VII

Գրադարանները

«Այս ինչպէս է, որ ամեն քաղաք գրադարան չունի, ասում է Թոմաս Կարլէյլը. ամեն տեղ կայ ոստիկանութիւն, բանտեր, կախաղաններ, ինչու գրադարաններ չկան»։

Ի հարկէ ներկայումս նա այդ չէր ասի։ Ամբողջ Անգլիան ծածկուած է ժողովրդական գրադարանների ցանցով, որոնց պահպանելու համար միայն Անգլիայի և Ուէլսի քաղաքները, այսինքն չհաշուած Իռլանդիան ու Շոտլանդիան, վճարում են աւելի քան 500,000 ֆունտ ստերլինգ (մօտ 5 միլիոն ռուբլի)։ 1850 թ. պարլամենտը մի օրէնք ընդունեց, որ իսկապէս պէտք է Եվարդի ձրի գրադարանների օրէնք կոչուէր։ Այդ օրէնքի հիման վրա քաղաքային վարչութիւնը, իսկ վերջին ցուցմունքի համաձայն ամեն մի բնակիչ, իրաւունք ունի դիմելու քաղաքի ազգարնակութեան հետևեալ հարցով. «Ուզում էք նշանակել առանձին հարկ հասարակական գրադարան հիմնելու և պահպանելու համար» Մինչև 1896 թ. մասնաւոր հարկի հաշուով բացած գրադարանների թիւը 300-ից աւել է։

Ամեն մի այդպիսի գրադարան ունի ընթերցարան, որտեղ ստացվում են Անգլիայի ամենատարածուած լրագիրները։

Վերցնենք օրինակի համար Լինդի ժողովրդական ընթերցարանը։ Նա ստանում է 22 առաւօտեան լրագիր, 4 երեկոյեան լրագիր, 74 շաբաթաթերթ, 67 ամսաթերթ, 5 եռամսեայ հանդէս։

Ընտանեկան ընթերցանութեան դեկավարութեան համար հիմնուած է ընտանեկան ընթերցանութեան ընկերութիւն (National home reading Union)։ Նա խորհուրդ է տալիս, թէ ինչ գրքեր կարելի է կարդալ, հրատարակում է ամսաթերթեր, կազմակերպում է ընթացիկ շրջաններ։ Ընկերութեան խորհուրդը ամենայն տարի հրատարակում է գրքերի 3 ցուցակ՝ 1) ընդհանուր ընթերցանութեան համար, 2) մասնագիտական դասընթացի համար, 3) պատանիների համար։ Ասել չուզի, որ ընկերութիւնը մեծ քանակութեամբ անդամներ ունի և հանդիսանում է իրրև նշանաւոր գործօն երկրի մասնագիտական և ընդհանուր զարգացման գործում։

Այժմ աւելորդ չենք համարում մի քանի խօսք ասել բրիտանական թանգարանի նշանաւոր գրադարանի մասին, որը Փարիզի ազգային մատենադարանից յետոյ ամենահարուստն է, իսկ գրացուցակների կանոնաւորութեան և կատարելութեան կողմից իրեն հաւասարը չունի։ Գրադարանը ունի աւել քան 2 միլիոն հատոր, որոնց մէջ երևելի են եբրայերէն (12 հազար հատոր), չինարէն (27 հազար հատոր) և արևելեան միւս լեզուներով գրած գրքերի ժողովածուները։ Գրադարանի գրացուցակը, որ կազմած է ըստ հեղինակների անունների, բռնում է 2,000 հատոր։

VIII

Ընկերութիւններ

Անգլիան ամենայն իրաւունքով կարելի է ընկերութիւնների երկիր անուանել։ Ոչ մի տեղ չկան այնչափ շատ հասարակական ընկերութիւններ և ոչ մի տեղ վերջիններս այնչափ ազատութիւն չունեն, որքան Անգլիայում։

Նրա ընկերակցութիւնների մէջ առաջին տեղն են բռնում բանուորական ընկերութիւնները կամ տրէդ-ունիօնները։ 1825 թ. թոյլատրութիւն եղաւ այնպիսի ընկերութիւններ կազմելու, որոնց նպատակը պէտք է լինէր բարելաւել աշխատանքի պայմանները։ 1851 թ. հիմնուեց միացեալ մեքենագործների յայտնի ընկերութիւնը։ Trade—Unions Act-ը 1871 թ. արհեստաւոր բանուորական շարժումին օրինական ոյժ տուաւ, որի հետևանքն եղաւ ընկերութիւնների արագ աճումը (1898 թ. գոյութիւն ունէին 267 բանուորական ընկերութիւններ)։ Դրանց անդամների ընդհանուր թիւը հասնում էր 1,644,591-ի։ Բանուորական շարժման և բանուորական ընկերակցութիւնների գլխաւոր նպատակն է՝ ապահովել բանուոր դասակարգի նիւթականը և պաշտպանել նրան կապիտալիստների հարստահարութիւնից։ Ընկերութիւնը մարտնչող հաստատութիւն է։ Նրա յարձակողական և պաշտպանողական զէնքն է իւր գանձարանը։ Գանձարանը կազմվում է անդամավճարներից, իսկ ծախսը —այն թոշակներից, որ տրվում են անդամներին հեռանալ 4 դէպքում՝ գործադուլի, հիւանդութեան, ծերութեան և քամբախտութեան ժամանակ։

Միւս ընկերութիւններից կյիշենք կրթական և ինքնօգնութեան ընկերութիւնները։ Օրինակի համար, «Ragged Schoal Union» «մուրացիկ» դպրոցների ընկերութիւն—ունի մօտ 270 երեկոյեան և կիրակնօրեայ դասատուներ, ուր յաճախում են աւել քան 50 հազար երեխաներ։

«Զահիլ աղջիկների ժողովարանների ընկերութիւնը», ներկայումս ունի 35 ժողովարան Լօնդօնի զանազան մասերում։ Անդամավճարը տարեկան 4 ռուբլի է. ծառաները վճարում են միայն կէսը։ Ժողովարանը ունի գրադարան, ուր կարելի է ընթերցանութեան գիրք ստանալ ձրի։ Շաբաթը մի անգամ լինում են գրական-երաժշտական երեկոյթներ պարերով։ Մնացեալ երեկոները նուիրուած են անգլիերէն լեզուին, թուաբանութեան, ձեռագործին, նկարչութեան, երգեցողութեան, երաժշտութեան և մարմնամարզութեան։ Ընկերութեան անդամները տալիս են մատաղ—բանուորուհիներին նուագանդէսի տոմսակներ, տանում են նրանց թանգարաններ, ցուցահանդէսներ և այլն։

«Կապոյտ ժապաւէնի ընկերութիւն». ունի աւել քան 600 հազար անդամ, որոնք երդուել են ոգելից խմիչքներ գործ չածել և իբրև նշան կապոյտ ժապաւէն են կրում։

«Անգլիքան եկեղեցու ժուժկալութեան ընկերութիւն»(The Church of England Temperance Society). ունի նոյնքան անդամներ։ Նրա գործունէութիւնը ուղղուած է կեանքի այն պայմանների դէմ, որոնց մէջ աճում է ալկոհոլականութիւնը։ Ընկերութեան միսսիոնարները ներկայ են լինում դատարանում, մեղապարտներին իրանց երաշխաւորութեան տակ են առնում, նրանց համար

գործ են դնում, բանից դուրս եկողների և ոճրագործների մասին հոգս են քաշում, տարածում են գրքոյկներ և թռուցիկներ, կազմում են ժողովրդական դասախօսութիւններ։

Մանկանց ընկերութիւնները «Band of Hope» (յոյսի ընկերութիւն) անուն են կրում։ Անդամները ստորագրութիւն են տալիս, որ ոգելից խմիչքներ չեն գործածելու։ Անգլիայում կայ մօտ 21,400 այդպիսի ընկերութիւն. մանուկ-անդամների թիւը 3 միլիոնի է հասնում։

IX

Գրականութիւն եւ գիտութիւն

Անգլիայի կուլտուրական արտասովոր ծաղկումը սերտ կապ ունի նրա փայլուն գրականութեան հետ, գրականութիւն, որ աշխարհին տուել է ամենամեծ բանաստեղծներից ու խօսքի վարպետներից մէկին՝ Վիլլիամ Շէքսպիրին... Դրանից յետոյ գալիս է նշանաւոր բանաստեղծների մի երկար շարք, որոնք թէև աւելի պակաս խոշոր են, բայց և այնպէս կարող են օտար երկիրների աչքի ընկնող բանաստեղծների շարքը դասուել։ Այդպէս են—Ջորջ Գօրդօն Բայրըն (1788—1824) «Դոն Ժուանի», «Չայլդ Հարոլդի», «Շիլլիոնի կալանաւորի» հեղինակը-Ռոբերտ Բերնս (1759—1796), որ գրել է «Tom O'Shanter». Պերսի Շելլի (1792—1822) «Մաբ թագուհի», «Ազատեալ Պրոմեթէոս» և «Չենչիի» հեղինակը. Ալֆրեդ Տընիսոն (1809—1892). Թոմաս Մուր, Պոպ. վիպասաններից յիշենք Վալտէր Սկոտին, Սաերնին, Լիտտոնին, Ֆիլդինգին, Չարլզ Դիկենսին, Տեկկերէյ, Ջորջ Էլիոտին, որոնց հեղինակութիւնները տարածուած են ամենայն տեղ։ Նորագոյն հեղինակներից յիշենք Գեմբրի Ուօրդին, Կոնան—Դոյլին, Գոլ Կէնին։ Պատմութեան և փիլիսոփայութեան շրջանում Անգլիային պատկանում են ոչ-պակաս նշանաւոր դէմքեր՝ Լոկկ, Լիբբոն, Իւմ, Գալլամ, Մակօլէյ, Կարլէյլ, Ջոն Ստիւարտ Միլլ, Սամուէլ Ջոնսոն, իսկ այն գիտնականներին, որոնք ծառայել են արդի գիտութեան, թիւ չկայ... Թուենք ամենահռչակաւորները՝ Չարլզ Դարվին, Բէկոն, Իսահակ Նիւտոն, Հէքսլի Ֆարադէյ, Հերբերտ Սպենսէր, Դրէպէր, Տէյլօր, Մօրգան, Կարպենտէր, Չարլզ Լէյել, Աղէքսանդր Բէն, Բօկլ, Բենտամ, Զեննէր, Մալտուս, Ադամ Սմիտ և այլն։ Անգլիական գործիչներից յիշենք Զեմս Գարֆիլդին, որ հասարակ ոստայնանկ էր Լանկաշիրից. դա գտաւ կատարելագործուած մանելու մեքենայ 1770 թ., Կարդրաթային, որ 1785 թ. գտաւ ոստայնանկի մեքենայ. Զեմս Ուատտին, որ առաջին արտօնութիւնը ստացաւ իր առաջին շոգեմեքենայի համար. Ջորջ Ստեֆենսոնին, որ 1813 թ. վերջացրեց իր առաջին շոգեկառքը. Կուկին և Ուիտսոնին, որոնք 1837 թ. էլեքտրական հեռագրի արտօնութիւնը ստացան։

Վերջացնելով Անգլիայի ԺԹ. դարի քաղաքական և հասարակական կեանքի տեսութիւնը մենք չենք կարող չմիանալ Ս. Ի. Ռապպօրտին, որ անգլիական ազգը գիւցազն է կոչել։ Այո, նա գիւցազն է և ոչ միայն իր նիւթական կարողութեամբ, այլ և շնորհիւ իր բարձր բարոյական ոյժի, ինքնայարգանքի և արդարութեան

զգացմունքի։ Անգլիան կարող է կոչուել երկիր, ուր արևը ամենքի գլխին հաւասար և միատեսակ է փայլում, ասել է մի անգլիացի, և նա ամենայն իրաւունք ունէր այդ բանը ասելու։ Ոչ մի տեղ չկայ այնպիսի յարգանք դէպի անձնական արժանաւորութիւնը և մատուցած ծառայութիւնը, որպէս այդտեղ։ «Competition open tu all, the fittest will survive»—մրցումը բաց է բոլորի առաջ, թող ամենաընդունակը յաղթանակէ—ահա անգլիական հասարակական կեանքի նշանաբանը։ Պետութիւնը ոչ մի ժենավաճառութիւն չէ անում, արդիւնաբերութեան ոչ մի ճիւղերում, և ահա այդ ազատ մրցումն է պատճառը, որ անգլիացիք ունեն թէ արժան և թէ ամենալաւ տեսակի ապրանք, թէ հաղորդակցութեան ճանապարհներ, թէ օրինաւոր դպրոցներ և թէ անկաշառ լրագիրներ... Բոլոր յարաբերութիւնների և հաստատութիւնների մէջ ազատութիւնն է թագաւորում և միմիայն նրա շնորհիւ, արգելքների, թոյլտուութիւնների և վաւերացման սիստեմի բացակայութեան շնորհիւ Անգլիան զարձել է այն ինչ որ է, այսինքն եւրոպական առաջաւոր պետութիւն և առաջնակարգ երկիր իւր արդիւնագործական ու քաղաքակրթական զարգացմամբ։

ՎԵՐՋ

ՀԱՅ. ՍՍՌ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՀ-ՍՍՌ Ա.Մ.Մասիսյան
ԵՐԵՎԱՆ

Nicholson f.

ՀՀ Ազգային գրադարան
NL0405945

ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ

Մինչեւ այժմ լոյս տեսած գրքերը.

1. Անդէրսընի Հէքիաթները գինն է . . 50 կ.
2. Արբեցողութեան դէմ . . . 15 կ.
3. Ճապոնիա . . . . . 25 կ.
6. Անգլիայի քաղաքական և հասարակական կեանքը . . . . 15 կ.

ԳԻՆ՝ Է 15 կ.

Մամուլի տակ է.

4. Հանրագիտական բառարան Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆԻ
5. Հայկական տոպագրութիւն ԼԷՕԻ